

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 17

18 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դրամ եւ Գրականութիւն	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
Դպրոցական առողջապահութիւն.	ՏՈՒԹ. Վ. ԹՈՐԴՈՄԵԱՆ
Աբեղաձագն յԱրմաւ (Կցկոտ Թեաւակներ)	ՎԱՀԱՆ ՎԱՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
Հայ կիներ Ֆրանսական գրականութեան մէջ	Լ. ԳԻՐԻՇՃԵԱՆ
Առաջին համբոյր (Բանաստեղծութիւն)	Մ. ՈՒՂՈՐԻԼԵԱՆ

Խմբագրական Նօթեր.— Զանազանք

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրինքն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դրամ եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 րուպի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Ձեռ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զխաւար ըմպելին դարձած է, ա'յնքան բաղմամբիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լու ընտրութիւն մը ընել, Այդ տեսակներէն մասնք իշտուար են իբր բարձրագոյն եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան բարձրիկ համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կազդուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ ու հոտ մանաւանդ. կազ, դուրիշ եւ զօրացուցիչ բնութեան պղծեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնի թէյը՝ որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Նավրուեան եւ Իսագուլեան թէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական զուտ թէյ, մասնաւոր եւ դուրեկան աւելիեցող ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր նոսր, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սեյլան եւ Ճապոնի ամէն տեսակ թէյեր:

Ուտադուրքիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնաբուաբու (gynécologue), Տօքթէօր Էմիրզէ օր 15 տարուան գործունէութեամբը մեծ հարաւ ստացած է: Կը ծանուցանէ յոր. գոյ յաճախորդներուն թիւ բնակաբանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Բաց ի վերջիչեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթեաներով ջղային եւ հագեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրասթիկ եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դաղորումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրի ֆեմալիքը եւսայլն: Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ ուղքատները: 6—10



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏՄԵՍԱՐՈՅՃ

Մուղափէրիէ Հիւանդանոցին եւ Պարակական Ինսպանատան Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61 Չըրանեան աբաղքան Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն տեսակ հիւանդութիւններով առաւապօղներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գրիչերուն օրը եւ է ժամըն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոյաները: Ծորեկները ակոյալ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է վկայեալ տառապանքներ ծուրի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ նոյն դարմանատան մէջ: Աղֆասներուն ձրի 6—10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԻ ԿՐԱՆՍ . ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՊԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ԿՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց զուտ փրայ պահածի համեմատու
թիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գէր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութիւնէն :

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Յասնաթի աժէնէն նշանուար
դատաւորներէն . ինչպէս

Մ. ՌԸՆԵ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի
Լիօնէի վարչական խորհուրդի անդամ .

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դրամագրական ընկերութեան վարչական խորհուրդի անդամ .

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նախկին գանձապահ .

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի .

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱՐԱՍՏՈՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասամ Բաթրաճըղու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի .

ԾԱՆՈԹ. — Շահաւոր դիւք պիտի տրուի այն ֆինիչին որ կարելու աղիւնի մօ ի-
ստործած ուլլայ անձնապէս :

7—10

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Փմեկ տեսակ բոհաֆիլի ապրանքաց

Մեծ—Ուլլայ, Քիւրքէնեքու դրամ կից, Թ. 41—43

Եւրոպէս, արանց եւ կանաչ ճաշակաւ
հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլ-
թան—Համամ, Միաբլի Դրամատան դէմ
թիւ 58 :

Սոյն երկու վաճառատուններուն մէ-
ջ տնտեսած ապրանքները, թէ՛ Թօհաֆիլէ
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանաչ յա-
տուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տոկոսներէն, եւ դիւրամա-
տիւ գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան :

Աղաւ վառելու մեծապէս գոհ
թաղաքած է իր բաշխութիւ յաճախողները :

պէտք է որ Շուկայ ելլող մէկն ընտանիք
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հագալու համար :

7—10

ՏՕՔԹ Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ ԹԻԻ 12

Այն տեսակ ներքին հիւանդութիւններէ
զոտ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ
ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղեաց,
միզային ճանքաներու հիւանդութիւնները,
ջրային տկարութիւնները, ինչ եւ նոր գա-
ղիկան խտերը, Այս վերջին խտերը՝ ա-
ռանց ստամոքսի խտնաբաժան եւ նորագոյն
մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ :

Հիւանդ կընդունի մէկն օր կէս օրէ
վերջը, Զարեալութի օրերը միայն ճիւղ 7—10

ՀԱՋԱՐԱՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Առ նոր գիւտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարեւորութիւն մը ունին: Խոզատանձ (սըրաճա) և արեան տկարութիւն և միւս արեան քէշութեան հետեւանքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այսպիսի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամենակարեւոր և ամենաաքանչելի բան մը համարուիլ: Ահաւասիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն անտերու դէմ:



Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

23

SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդութիւն մէջ գտնուած փոշիները չորցնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր անտերը հեռու կը վերնաէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԴՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ուեցող տղոց կեանքը կը փրկէ:

Բոլոր բեղմնաբեր և բեղմնաբեր և ծնին:

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

VICTORIA DE BERLIN ՈՒՄԻ կեանքի, օժիշի, արկածի, ցման թուակի հիւղեր ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններուն վճարումները չաթաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին արտոկոմսիոնովարտակալ եւ ուղղակի քառավորութեան հսկողութեան ներքին

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայսր Պանրա եւ Քրէտի Լիոնէ

Լիսաբոն Ընդհ. Ներկայացուցիչ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Պոլիս Քաթրեմբոլլու խան

ԱՄԱՌՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 17

18 ՅՈՒՆԻՍ 1905

ԴՐԱՍ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորովին անկարելի է որ, մենք, մեր գրական հրապարակին մէջ, ունենայինք Պալ-զաք մը: Եւ Պալզաք ըսելով, պէտք է հաս-կընալ առողջ, զօրեղ, կորովի, զուարթու-թեամբ զեղուն մարդ մը, ձեռնարկու մը՝ հարիւր տեսակ գործի մէջ նետուած եւ ամէ-նէն ալ վնասով ելած անձ մը, մնացած ա-ռանց նիւթական միջոցի, առանց ինչքի, պարտքերու տակ ծանրաբեռնեալ, պահան-ջատէրներէն հալածուած, բողոքագիրներու սպառնալիքին տակ սնանկութեան եղբրքը հասած, եւ որ, յուսահատութեան վարկեանին կը նետուի գրականութեան մէջ, կը յամառի գրելու որուն այնքան քիչ ընդունակ էր. կը խմբագրէ օրագրի անթիւ յողումներ, կը յօրինէ քառասունի մօտ վէպէր որոնց ա-մէնքն ալ այսօր մոռցուած են. կրկին կը յօ-րինէ վէպերու բոլորովին նոր շարք մը՝ որ կը կազմեն վերջապէս Comédie humaine, Մարդկային կեանքագրութեան բովանդա-կութիւնը, եւ որոնցմով կ'արժանանայ՝ մըշ-տընջենաւոր համբաւի մը, բարձրագոյն դիր-քի մը վիպագրութեան մէջ, զեւ այսօր ան-ուանուելով գաղղիացի վիպագրաց ամենէն մեծը:

Ի՞նչ էր Պալզաքի յամառութեան շարժա-ռիթը՝ որ զայն կ'քած եւ գամուած կը պա-հէր գրասեղանին առջեւ, օրուան լոյսին դէմ վեղկերը գոցուած սենեակի մը մէջ, ութը ճրագով աշտանակէ մը ցոլացող լոյսին տակ, օրը տասներկու ժամ, յաճախ իսկ տասներկու ժամ, սկսելով առտուան ժամը վեցէն (ըստ եւրոպական ժամուն) մինչև յաջորդ օրուան առտուն, երկու պատառ կերակուր ուտելով

նոյն սենեակին մէջ, եւ անվերջանալի սուրճի գաւաթներուն յատակը փնտռելով տոկու-նութեան ջղային ոյժն ու գործելու կորովը: Ի՞նչ էր այս գերագոյն եւ գերմարդկային սպառնցնող ճիգին շարժառիթը:

Մի միակ էր այդ շարժառիթը...: Ստակ շահիլ, պարտքէ ազատելու համար...: Եւ շահեցաւ, շատ շահեցաւ, եւ որքան շատ շա-հեցաւ՝ այնքան շատ պարտքի տակ մնաց: Եւ երբ, իր վերջին օրերուն մօտ, յարաբե-րական դիւրակեցութեան մը վայելքին ցան-կաց, չքեղութեամբ կահաւորեց իր տունը, զարդարեց զայն գեղարուեստից էն թան-կագին առարկաներով, եւ պճնեց ամենաճար-տար արուեստաւորներու ձեռքէն ելած կա-րասիւններով: Դարձեալ ան օրը, դարձեալ իր դառն եւ անախտ վախճանին մօտ ուր իր բարեկամները անկեղծօրէն զուարթ էին չը-նորհաւորելու անոր տանը այս բարգաւաճ վիճակը, ան կը պատասխանէր անոնց.

—Ասոնցմէ ոչ մէկ բան չպատկանիր ինծի. բարեկամներուս շնորհիւն է որ ունիմ կահա-ւորուած տունս. ես անոնց դռնապանն եմ:

Նպատակս չէ փորձել հոս Պալզաքի կեն-սագրութիւնը որուն վրայէն եթէ սահելով անցայ, անոր համար է թերեւ օր բերանացի կրկնելու աստիճան շատ ուսումնասիրած եմ անոր կեանքը: Այս կեանքն է որ իբր օրի-նակ կը բերեմ, այսօր, մեր գրագէտներուն եւ յայտնեմ սա կարծիքը թէ մենք, մեր գրա-կան հրապարակին մէջ, կարելի չէ բնաւ որ ունենայինք Պալզաք մը:

Նախ, ան տաղանդ մըն է իսկածին, ճո-խացած տարիներու եւ տարիներու ընթերց-

մամբ, գլուխ մըն է հմտութեամբ, գիտութիւններով և ամէն կարգի ծանօթութիւններով ամբարուած. խուզարկու աչք մըն է մանրադէնին, խորաթափանց, ամէն ինչ դիտող, մարդկային սրտին ամէն ծալքերը բացող և մերկացնող: Այս տեսակէտով, վախ չկայ թէ այսօրէն մինչև վաղը, կամ քառասունըութը ժամուան մէջ ունենայինք հայ Պալզաք մը...:

Սիւս տեսակէտով է մանաւանդ որ կը սեմ թէ Պալզաքի նման գրագէտի մը գոյութիւնը բացարձակ անկարելիութիւն մըն է մեր մէջ: Այս, դրամական տեսակէտն է:

Ըրէ՛ք գերմարդկային ամէն ճիգ՝ չարելու համար բիւրաւոր տողեր ետեւէ ետեւ, դիզելու համար հատորներ՝ մէկը միւսին վրայ, կուտակելու համար գլուխ-գործոցներ՝ գլուխ գործոցներու վրայ, և վերջապէս, օր մը, շնչասպառ, վաստակաբեկ, ջախջախուելու համար անոնց չեղձակոյտին տակ...: Ըրէ՛ք այս բոլորը, փոխ առէ՛ք մէկէն ու միւսէն, մնացէ՛ք պարտական մինչև ձեր վիզը, փարեցէ՛ք պարտքին իբր գօրեղ խայթոց մը անխոնջ աշխատութեան, և եթէ պիտի կարծէ՛ք որ եղաք Պալզաք մը... օ՛հ, չափազանց կը սխալիք:

Որովհետեւ, ձեր գիրքերը պիտի չծախուին: Ինչո՞ւ պիտի չծախուին: Որովհետեւ ընթերցողները փոքրաթիւ են: Որովհետեւ ընթերցողներուն մեծ մասը չուզեր ստակ տալ գնելու համար հրաշքով չինուելիք ձեր գիրքերուն բոլոր հաւաքածոն: Եւ դուք, պիտի չլատիք, պիտի վհատիք, և վերջապէս անպատճառ պիտի լինաք այն խորխորատին մէջ, պիտի գահավիժիք այն անդունդին մէջ՝ ուրկէ փրկուեցաւ Պալզաք մը մինչև վերջ գիմադրելով սնանկութեան դէմ, ոգի ի բոլին մաքառելով սնանկութեան դէմ...: Եւ չսնանկացաւ...: Բայց, դուք, պիտի սնանկանայիք, այսինքն մենք, կամ մեր հայ Պալզաքը...:

«Մարմաւորուեցաւ իր Սեզան Պիոթօօին մէջ,— կըսէ Զօլա,— մարտնչեցաւ սնանկութեան դէմ գերմարդկային կամքով մը. գրականութեան մէջ չփնտռեց մի միայն փառք,

այլ գտաւ հոն արժանապատուութիւն և պատիւ»:

Պիտի կարենայի, դրամի այս խնդրոյն մէջ, չսկսիլ Պալզաքով, այլ գլխաւորաբար օրինակ բերել ժէ և ժ՛Լ դարերու գաղղկական մատենագիրները և անոնց նիւթական կացութիւնը: Մասնաւորաբար ընտրեցի Պալզաքը, որովհետեւ իր օրերուն կը հանդիպի գաղղիացի գրագէտներուն բարգաւաճութեան սկիզբը: Գաղղիացուց 1830ին սերունդը առաջինը եղաւ մեծ շահեր ձեռք ձգողը: Էօթէն Սիւ շատ սուղ կը ծախէր իր վէպերը, երբ յաջողութիւն գտաւ իր Բարբիլ Գաղսեմբը: Ժօռօ Սան հասաւ դիւրակեցութեան: Աղեքսանդր Տիւմա շահեցաւ միլիօններ: Վիգթոռ Իւկօ ամուսնացաւ առանց հարստութեան, բայց հասաւ պատուոյ և պերճութեանց յաղթական օրերուն:

Արդիներուն մէջ, Աղեքսանդր Տիւմայի որդին պահեց ինչ որ հայրը վատնած էր: Վիգթոռին Սառտու, թշուառ չքաւորութեամբ սկսաւ և տիրացաւ դղեակի մը: Զօլա չեղաւ նուաղ թշուառ և նուաղ չքաւոր. մանասարտի մը մէջ անցուց երիտասարդութեան առաջին օրերը և եթէ կը գիմադրէր ցուրտին և իր կիսամերկութեանը, զայն կը պարտէր իր քարի պէս կաղմին և կատարեալ առողջութեանը:

Այս քանի մը օրինակները բաւական են ցոյց տալու համար թէ հայ հասարակութիւնը անբաւական է ապրեցնելու համար իր գրագէտները, վարձատրելու և արժանապատուութեան դիրքի բարձրացնելու իր գրչի գործաւորները: Օրագրութիւնը խնդրէ դուրս է. վասն զի օրագրութիւնը գործի մը դարձած է իր սահմաններուն մէջ: Բայց իսկապէս գրական և երկարաշունչ գործի մը տէրը չի կրնար ապրիլ իր գիրքին վաճառմամբ, ո՛ւր մնաց հարստանալ անով: Եթէ՛ կարենար իսկ հանել իր նիւթական ծախքերը...:

Այս պատճառաւ է որ ամէն նորահաս գրագէտ, մեր մէջ, կերադէ Մեկենաս մը, մեր գրագիտութեան Մեսիան...: Որչա՛փ կըսպասեն՝ այնչափ կուշանայ...:

Երկարաշունչ գործեր անոնց տրուած է՝

որոնք զերծ են օրապահիկի հոգերէն: Լաւագոյն միջնորդութեամբ, վանական կեանքն է անոնց համար: Դժբաղդաբար, վանական կեանքին մէջ ալ գրականութիւն առաջ չի գար: Հնախօսութիւն, բանասիրութիւն, պատմական քննադատութիւն, ահա՛ վանական կեանքին բոլոր տալիքը: Աւելցուցէք ասոր վրայ դասական բանաստեղծութեան քանի մը արտադրոյթներ, և ճշմարտութենէ հեռացած չէք ըլլար: Կերեւայ թէ փորը կուշտ մարդոց արուած չէ գրական ստեղծագործութիւնը:

Մենք, այսօր, գրականութիւն ըսելով կը հասկնանք ժողովրդին որովայնէն սերած պտուղ մը, ժողովրդին երկուեքին, բարձրին, կիրքերուն, նկարագրին և սովորութեանցը հաւատարիմ ցուցադրութիւնը, պարզ, համարձակ, անկեղծ, անաչառ, խորաթափանց:

Մինչև այն օրը, պիտի ըսէիք, փայտի պէտք պիտի ըլլար՝ որպէս զի մեր հայ Պեռնար Փալիսին կարենար վառել իր փուռը, հասնիլ իր գիւտին կատարելագործութեանը, ճեղք ձգել ճերմակ ու փայլուն յախճապակին...: Ինչ որ եղաւ Պեռնար Փալիսի խեցեղէններու արուեստին համար, նոյնը եղաւ Պալզաք վիպագրութեան համար: Երկուքն ալ տուայտեցան: Առաջինը զոհեց իր ինչքը, տունը, կարասին, պարտեզին փայտե ցանկապատը, տանը տախտակամածը, ամէնը կրակի վերածելով, ամէնը մոխիրի դարձնելով: Պեռնար Փալիսի պատուաւոր մարդ էր որով երգեմն փոխ դրամ ալ գտաւ զոր վերջէն վճարեց, յաջողութեան օրերուն:

Պալզաք ըրաւ նաև նոյն բանը իր անձին, իր առողջութեանը վրայ. մաշեցուց, սպառեց իր մարմինը, սիրտը, թոքերը, ուղեղը. այրեց, մոխիրի դարձուց բնութեան ամէնէն առատ պարգեւները առողջութեան և զուարթութեան: Պալզաք մնաց միշտ պատուաւոր, չի սնակացաւ: Աշխատեցաւ, ապրեցաւ, անդադար չահեցաւ, անդադար ծախսեց, և բոլոր այս փոթորկալից կեանքէն ծնաւ մեծ գրականութիւն մը որ իր կարեւորութեանը ամբողջ ծանրութեամբը այսօր կը կշռէ ամբողջ աիեղերքի մարդկութեան մտքին վրայ:

Այս դանազան նկատումներով է որ կը վերադառնամ յօդուածիս բնաբանին, կրկնելու համար թէ՛ աչքի առջև ունենալով հայ գիրք կարդացողներուն փոքր թիւը և ասոնց սահմանափակ նիւթականը, կարելի չէ որ այս պարագաներուն տակ մարմնաւորուէր հայ Պալզաք մը, անոր չափ կորուլի, անոր չափ հմուտ և գիտուն, անոր չափ փորձ՝ զանազան արուեստներու, ճարտարուեստներու, գիտութեանց մէջ: Եւ ունենալով բոլոր ասոնք, տոկար անօթութեան՝ ուրկէ ազատ մնաց գաղղիացի Պալզաքը:

Թերևս օր մը ունենայինք, մեր հայ գրագիտութեան մէջ, Պեռնար Փալիսի մը՝ որ իր ձեռքովը իր տանը քով շինէր իր փուռը, երթար ինք առնել իր աղիւսները, կոնակին վրայ բեռցնել, սատարի պէս շաղախ շինել, որմնադրի պէս պատ հիւսել: Յետոյ, յաջողութեան վարկեանին, մնացած ըլլար առանց մէկ կուտի, անտուն, լքուած, աստանդական, և այնքան պատուաւոր՝ որ պղտիկ պանդոկապետի մը անգամ վստահութիւն աշգէր և անոր սեղանին մնացողներէն կերակրուէր վեց ամիս, և անոր պանդոկին մէկ անկիւնը պառկէր: Պէտք ունենար օգնական գործաւորի մը և անկարելութեան մէջ գտնուէր անոր օրականը վճարելու, ծախէր մինչև իսկ իր զգեստները և հատուցանէր գործաւորին անվճար մնացած օրականները...:

Թերևս օր մը ունենայինք այսպիսի տիւ պար մը...:

Այս բանն անգամ կասկածելի չերեւա՞ր ձեզի, ըսէ՛ք:

Գ.Բ. ՄԱՆԿԱՍ

ԵՐՈՒՍՍՆԵՄԻ վանական հալիւներուն Բնիկ Յանձնաժողովի անդամակցութեանէն կրկին անգամ հրաժարական զրկած ըլլալով Արշակ Էֆ. Դարակէօղեան, Սառն ժողովը իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ նոյն Յանձնաժողովին անդամ կարգեց վաճառական Միհրան Էֆ. Մուրատեանը որ, տարիներէ ի վեր, իբրև անգամ Բերայի պարտուց բարձման Յանձնաժողովին՝ ապացոյցը տուած է իր ձեռնհասութեան ու խղճամիտ հոգածութեան՝ հանրային մատակարարական հաշիւներու և գործառնութեանց մասին:

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)

Հազիւ թէ Վահան վարդապետ մրափած էր, անա նորէն կը լսէ և կըսթափի սոյն ձայնէն.

— Թը՛ք, Թը՛ք :

«Ո՞վ է ան» :

— Ե՛ս, Մամբրէ Վերծանողը :

«Մամբրէ Վերծանողը հայ սուրբ Թարգմանիչներէն վարդապետ մըն էր, որ 1500 տարի առաջ մեռաւ, հիմա յարեա՞ւ» :

— Ես Արմաշու Վերծանող Մամբրէ վարդապետն եմ :

Եւ անա դռնակը կը բացուի ու ներս կը մտնէ հասակով ու մօրուքով չէնք — շնորհք վարդապետ մը որ քմծիծաղով կը զրուցէ.

«Բարի եկար, հէմէշերի, դուն Պահէճիկէն, ես ալ Արսլանպէկէն» :

Դիւղով իրարու մօտիկ, սրտով ալ հեռուէն իրարու մօտիկ եղող այս երկու վարդապետները կաթողին իրարու կը փաթթուին :

Ո՞վ էր այս Մամբրէն. — Վանքին յաւիտենական միաբանը, որ Ներսէս վարդապետի պէս վանքէն երբեք մեկնած չէր, միայն սատարեցողութեամբ որ Ներսէս ազարակը սիրած էր, իսկ սա Զարեափանի տաճարը, որուն լուսարարապետն էր միշտ, մին՝ Ներսէս՝ բրիչը սիրած էր, իսկ սա՝ գրիչը, ուստի քաջ հայկաբան ըլլալով՝ վերծանող կոչուած էր, և որուն յանձնած էր Օրմանեան Սրբազան իր նորահաստատ Դպրեվանքին հայաբանութեան դասախօսութիւնը :

Բայց թէ ի՞նչու Արմաշու վանքը Դպրեվանք եղաւ, այդ ալ գիտնալու բան մըն է :

1876ին Ղալաթիոյ մէջ հաստատուած Ազգ. Մատենադարանի հիմնադիրներէն մին՝ վարդապետ մը՝ Խառքէօյի Զըխսալընի դառիվայրը գտնուող Ներսէս Պատրիարքին տունը կը մտնէր, ուր անորմէ կը լսէր սա խօսքը.

«Ա՛լ մատենադարանիդ ձօխացաւ զարգացաւ, ուրիշ բան մը ունի՞ք» :

— Այլ սակայն Մատենադարանի համար մարդ ալ պէտք է :

«Ուրեմն մարդարա՞ն մ'ալ բանալու պէտքը ունիք» :

— Եթէ ոչ մարդարան, գէթ Մարդարան մը : Ներսէս Պատրիարք որ երբեմն զուարճախօսելու բնոյթն ունէր և գիտէր վարդապետին բուն միտքը, կը զրուցէ քմծիծաղով :

«Ուրեմն Օրմանեան հայր Սուրբ, արդեօք Ընծայարան ըսել կ'ուղէք» :

— Ոչ, այդ բառը կաթողիկոսեան համար գուցէ մեկնուի :

«Աստուածաբանական քոլէ՞ժ» :

— Այդ բառն ալ բողոքականութեան համար գուցէ մեկնուի :

«Կղերանո՞ց» :

— Այդ բառն ալ խորթ է հայ ականջներու :

«Ուրեմն Ժառանգաւորաց վարժարան» :

— Ոչ, ոչ, այդ բառն ալ մեր մէջ չատ գործածուած ըլլալով, վէճերու տեղի տուած է, մանաւանդ կը յիշէք որ երբեմն խնդիր եղաւ թէ Ժառանգաւորաց վարժարան ունենալու է, այլ ոչ Ժառանգաւոր, և ցարդ հետեւութիւնն եղաւ «բաղում ջան» և անօգուտ վատտակ» :

Տօգունեցաւ Ներսէս Պատրիարք և յառեց իսկոյն. — «Վկայ խօսքիդ ճշդութեան Շահնազարեան վարժարանը, որ իբր Ժառանգաւորաց վարժարան բացուեցաւ, այլ չունեցաւ Ժառանգ արքայութեանն Աստուծոյ» :

— Վասն զի գետինը լաւ ընտրուած չէր : Ներսէս Պատրիարք գլուխը քիչ մը երերելէ յետոյ, ըսաւ Վարդապետին. «Հիմա դուք լեռնի վեր պիտի ելլէք, գաւառ պիտի երթաք իբրեւ առաջնորդ, գտէ՛ք գետին մը և հոն գրէք հիմը Մարդարանիդ, Ընծայարանիդ, ա՛լ որ բառը կ'ուղէք նէ, գործածեցէք. Աստուած տայ որ յաջողիք» :

— Յաջողութեանն աներկբայ եմ : Միայն թէ խնդիրք մը ունիմ. կ'ուղեմ որ հիմնուելի հաստատութեան անունը դուք դնէք, կնքահայրը դուք ըլլաք» :

«Դեռ չծնուածի մը անուն կը դրուի՞» :

— Համարէ թէ ծնուած է :

«Բանի որ դուք պիտի ըլլաք ծնողը, կըն-
քահայրն ալ դուք եղիք, լմնայ երթայ:»

Հաղիւ Ներսէս Պատրիարք այս խօսքն
արտասանեց, ահա՛ վարդապետն իր բամբ
ձայնովն ու տեղէն ցատկելով գոչեց, ԴԸՊ-
ՐԵՎԱՆԲ:

Ներսէս Պատրիարք թերեւս իր կեանքին
մէջ այդքան խնդացած չէր, որքան նոյն պա-
հուն խնդաց և կը յեղյեղէր. «Սքանչելի՛ գիւտ.
ինչ սիրուն անուն, Դ.դրեւանք. կեցցես
ծնողդ, մկրտիչդ, կնքահայրդ այդ ծնելի,
մկրտելի և դրոյմելի զաւկիդ սիրականի»:

Ու եղաւ որ օրեր անցնին և ահա Պատ-
րիարքարան հետզհետէ տեղեկագիր կը հաս-
նէր թէ այսինչ վանքին հողը լպրծուն է,
այնինչինը քարուտ, ժեռուտ, կամաւազուտ:
Ու եղաւ օր մ'ալ թա՛ իջմիտնէն տե-
ղեկագիր հասնէր Պատրիարքարան թէ ձեռ-
մարանի քով Դպրեվանքի համար գետին
չկայ: Եւ փառք յաւիտեանս ամէն:

Ու եղաւ որ 1888ին երբ Արմաշու վա-
նահայր իորէն եպիսկոպոս Պատրիարք ըլլայ
և Օրմանեան եպիսկոպոս Ստամպոլ գայ և
երկուքը իրարու դէմ առ դէմ գտնուին, իր-
րէն Պատրիարք ըսէ Օրմանեան Սրբազանին.
«Ա՛լ հող ու գետին չմնաց, որ չչափէիր ու
չչափչիէիր, Լուսաւորչի լոյս հաւատքի
ծնունդ Դպրեվանքիդ օրօրոցը տեղաւորելու»:

— Մէյ մը սա Դարակէօմրիւկի Չարխա-
փանի քովէն անցնէի և յետոյ երթայի տես-
նել միւս Չարխափանը՝ Արմաշինը:

Իորէն Պատրիարք որ գրաբոր խօսելէ
կ'ախորժէր և «գրոց» մարդ զինքը կ'անուա-
նէր, ընդմիջեց անոր խօսքը ըսելով. «Աստ-
ուած իմ և Աստուած քո և ուխտ իմ ուխտ
քո: Աջ Տեառն ի վերայ քո և բազուկ Տեառն
հզօր զօրութեամբ իւրով զօրացուցէ զքեզ.
ե՛րթ ի խաղաղութիւն»:

Երբ Օրմանեան կը մեկնէր, ի լուր սա
ողորունկ ձայնի կանգ առաւ.

«Բան անօրէնութեան եղին ի վերայ իմ,
Տէ՛ր, Տէ՛ր, մի՛թողուր զիս»: Հարցուց Պատ-
րիարքին. «Ի՞նչ ձայն է այս»:

Պատրիարքը ոչ մէկ բառ արտասանեց:
Այլ Օրմանեան Սրբազան երբ նայեցաւ այն
կողմը՝ ուստից ձայնը եկած էր և տեսաւ
սաղմոսերգուն՝ Վահան վարդապետը՝ ժրպ-
տագին մօտենալով ըսաւ անոր. «Ե՛կ զինի
իմ»:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԳԻ

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՈՒՅԻՆ

ՅԻՐԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մարտ 15էն ի վեր Բարիզի մէջ սկսած
է հրատարակուիլ Ecrits pour l'Art տիտղոս
սակիր զուտ գրական ամսաթերթ մը(*), աշ-
խատակցութեամբ տասներհինգ հոգիէ բաղկա-
ցած խմբագրական մարմնի մը: Որքան գի-
տենք, այս գրչի գործակցութիւնը ամենա-
մեծ մասամբ կազմուած է ֆրանսական դրա-
կանութեան արդիափայլ ներկայացուցիչներէն
որոնք, սակայն, բացայայտօրէն crèmeը կը
կազմեն իրենց պատկանած Դպրոցին, և ո-
րոնցմէ իւրաքանչիւրը երկեակ կամ երրեակ
երկասիրութեանց ծրար մը ունի արդէն իր
անութին տակ:

Ecrits pour l'Artի խմբագրական մարմնին
տասներհինգ անդամներուն մէջ կը հանդիպինք
միայն երկու անուններու, որոնք ծանօթ են
մեր սահմաններուն մէջ. առաջին Ռընէ Կիլ,
«խորհրդապաշտ դպրոցին այս խորհրդանշա-
նը», որ արդէն 1887էն մինչև 1893 իր Տնո-
րէնութեան տակ ձեռնհասօրէն հրատարակած
է միեւնոյն ամսաթերթը: Երկրորդ անունն է
Զապէլ Նսայեան, Ռընէ Կիլի ծանօթացու-
ցիչը՝ մեր մէջ, և միակ կիինն ու օտարուհին,
որ պատիւը կ'ունենայ մասնաւոր հրաւերով
գործակցելու ֆրանսացի իմաստասէր—քեր-
թողներու խմբակին, թո՛ղ ըլլայ նոյն իսկ
չատ հեռուէն:

Հակառակ այն իրողութեան թէ մեր մը-
տաւորական դասակարգը ընդհանուր զար-
գացման հետ տիրացած է նաև անգլերէն և
առհասարակ ֆրանսերէն լեզուներուն, քի-
չերու կը հանդիպինք սակայն որ այս լեզու-
ներով գրականութիւն ըրած ըլլան: Աղեքս.
Փանոսեան շատ կանուխէն սկսած է գրել
ֆրանսերէն արձակը, այլ մանաւանդ ոտա-
նաւորը. Տոքթ. Տաղաւարեան տուած է մեզ
ֆրանսերէն գիտական գործեր: Բայց այս
ուղղութեամբ աշխատողներուն ցանկը, նոյն

(*) Paris, 29, rue de Lubeck, տարե-
կան բաժանորդագին 10 ֆր. իւրաքանչիւր
թիւը կ'արժէ 0,75 սանդիւմ:

իսկ չյիշատակուածներն ալ հաշուելով, չափէ դուրս սահմանափակ է: Բաղդատաբար աւելի շատ ունեցած ենք զբաղիտուհիներ, որոնք ինքզինքնին ֆրանսերէնով արտայայտելը դիւրագոյն գտած են, ինչպէս Տիկին Տիւսաք, Օր. Մարիան Տամատ, ևն:

Տիկին Զապէլ Եսայեան, ալ այս գծին վրայ կը գտնուի: Ֆրանսական գրականութիւնն ու լեզուն շատ կանուխէն այնքան տիրական ազդեցութիւն մը կատարած են իր վրայ, որ այսօր անոր նախասիրութիւնները, մտածելու և գրելու կերպերը կը հակին դէպ ի այդ որդեգրեալ մայրենի լեզուն: Տիկին Եսայեանի առաջին երկարաշունչ գործը—Սպասման Սրահին մէջ—ֆրանսերէն գրուած էր, զոր ինքը հայերէնի վերածելով կը հրատարակէր մաս առ մաս: Այս տեսակէտով, Սպասման Սրահին մէջը իրօք կ'ըլլար «Թարգմանուած վէպ», բայց ոչ այնպէս, ինչպէս պարզամիտներ երեւակայեր էին, այսինքն Թարգմանութիւն օտար հեղինակէ:

Վերադառնալով Ecrits pour l'Artի, ոշորախութեամբ կը տեսնենք թէ Տիկին Զ. Եսայեան երբեակ դերեր ստանձնած է անոր հրատարակութեան մէջ. նախ, անդամ է խմբագրութեան, երկրորդ, թերթին աշխատակցուհին է. երրորդ՝ Պոլսոյ գրական թըղթակիցն է, և իբր այդ, խմբագրութենէն հրաւէր ընդունած է ներկայացնել Թրքահայ գրականութեան ձգտումներն ու նորագոյն երեւոյթները: Ecrits pour l'Artի խմբագրութիւնը, թերեւս անգիտակցօրէն, յարմարագոյն անձին յանձնած է մեր գրականութիւնը օտարին ներկայացնելու այս կնճռոտ դերը, քանի որ Տիկին Եսայեան ամէն անձնական նկատումէ վեր կը նկատէ Դործն ու անոր Արժէքը:

Այս պահուստէն առջև ունիմ Ecrits pour l'Artի մինչև մայիս 15 հրատարակուած երեք թիւերը, 50—70 սովորական էջերէ բաղկացած հատորներ, ուր իմաստասիրութիւնն ու բանաստեղծութիւնը—և միայն այս երկուքը—հաղուադէպ զուգորդութեամբ մը գիրկընդլսառն ամփոփուած կը տեսնեմ: Այժմէու թեանց, վարկպարտի ծանօթութեանց կամ

Ժամանցիկ նիւթերու թերթ մը չէ այս. առնա՞նք որ թեթեւօրիկն ու հտպիւրը կը փնտռեն ամէն բանի մէջ, յուսահատութեամբ պիտի թղթատեն Ecrits pour l'Artի էջերը: Սորվելու, իմաստասիրելու և հմտանալու հետամուտները միայն պիտի կարենան համառնել անոր ընթերցումէն: Արձակ կտորները յաճախ Խորհուրդին մօայլներովը խմբուած են, թէպէտ միշտ հաճոյք մը կայ դանոնք հասկնալ ջանալուն և վերջ ի վերջոյ կարենալ ըմբռնելուն մէջ: Մտաւորականութեան ամպամած երկինքն է այս, ուր երբ իմացական արեւին ճառագայթը կարենայ ընդմուտ ըլլալ, յառաջ եկած պատկերը շատ աւելի հրապուրիչ կ'ըլլայ: Իսկ ոտանաւոր քերթուածները այլևս չեն այն թեթեւոտն ու կիւսային թրթռացումները եղանդուն, ուր միտքը չպիտի հեւար ընաւ. հոս՝ իւրաքանչիւր յանգի տակ մտածում մը կայ թաքուն, ինչպէս ծաղիկներու բաժակին մէջ պահուած մեղու մը կ'ըլլայ խայթուն: Այստեղ ամէն rythme իր հետ կը բերէ զաղափարին հանգստաքարը, որուն վրայ պահ մը կանգ կ'առնէ խորհող միտքը: «Բնազանցական գեղեցկագիտութեան», «Արուեստի մէջ կամքի ոյժին», «Գեղարուեստի աւանդալէպներ»ուն և ուրիշ այս կարգի նիւթերու վրայ շահեկան տեսութիւններ կան, որոնց մասին ճաշակ մը տալու համար կը յուսանք Թարգմանութիւններ ընել ի մօտոյ: Իսկ Մասիսի յառաջիկայ թուով պիտի հրատարակենք Թարգմանութիւնը այն երկու արձակ բանաստեղծութեանց, զորս Զապէլ Եսայեան այնքան նրբօրէն հիւսած է Ecrits pour l'Artի Ա. և Գ. թիւերուն մէջ—Mon Enfantը և La Barque:

Ամսաթերթին մէջ այլապէս հետաքրքրական բաժին մըն է նաև գրական քննադատութեանց Իրոնիկը, որուն չնորհիւ տեղեկութիւն կը ստանանք ֆրանսական նորագոյն գրական, թատերական և պարբերական հրատարակութեանց նկատմամբ. այս բաժնին գլխաւորաբար կ'աշխատակցի նոյն ինքն Ռընէ Կիլ: Անտարակոյս, երբ թերթին նշանակած ամենազգի աշխատակիցներն ալ

հետզհետէ զրկեն իրենց պատկանած գրականութեանց քրոնիկները, այն ատեն Ecrits pour l'Artը կ'ունենայ նսե միջազգային հանգամանք եւ օտարներու համար կ'ըլլայ աւելի շահագրգռական:

Բոլոր այս նկատումներով՝ մեր ֆրանսագէտ գրասէր դասակարգին անկ է աւելի մօտէն ծանօթանալ ներկայ հրատարակութեան. և այս կերպով ոչ միայն հայ գրագիրտուհի մը ջանքերը ճանչցած եւ անոր բարոյական ազդեցութեան շրջանակն ընդլայնած կ'ըլլայինք, այլ մանաւանդ առիթը կ'ունենայինք մեր առօրեայ ընթերցումներուն խառնելու լուրջ ու մօտածուած նիւթերու պատուաստը, որուն պակասը՝ այլ ևս քրոնիկ հիւանդութեան մը պէս ընկճելու մօտ է մօր թեթեւախոհ գրականութիւնը:

ԼԵՒՈՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Գ.

Դպրոցական առողջապահութեան յոռի թերութիւններովն է որ դպրոցի մէջ կը տեսնուի նաեւ ողնայարի ծռութիւն ըստած հիւանդութիւնը, որուն պատճառ են դարձեալ անյարմար և անկանոն նստարաններն ու գրասեղանները: Փահրներ, կիյեօմ, Վիրխօլ առողջաբան — բժիշկները իրենց երկար քննութիւններով դիտած են որ, գրեթէ երեսուն առ հարիւր, աշակերտները դպրոցի մէջ ենթակայ կ'ըլլան ողնայարի զանազան ծռութիւններու: Մեր աշակերտներն ու աշակերտուհիները գե'րժ են արդեօք այս դժբաղդութեանէն, չեմ կարծեր, թէ և հաստատած չեմ: Չեմ կարծեր, կ'ըսեմ, քանի որ անոնք տակաւին մեր նահապետական հինօրէնք նստարաններուն և գրասեղաններուն վրայ միշտ ծռու ու մռու դիրքերով նստած՝ ծռու կը գրեն, ծռու կը կարդան. ողնայարի սիւնակը ճկուն, կակուղ և դիւրաթեք, մանաւանդ երախաներու քով, կը նմանի ծառի մը բունին, վարդի մը ցողունին. եթէ ու-

ղիղ պահուի, ուղիղ ալ կը մեծնայ, ապա թէ ոչ՝ կը ծռի, մէկ կամ միւս կողմին առաջ կամ ետեւ կը հակի, և կը մեծնայ ծռու. գիտէ՞ք թէ ողնայարի ծռութիւններն ինչ գէշ հետեւութիւններ կ'ունենան մանուկներու վրայ. ողնայարը ճիշդ տունի մը սիւնին կը նմանի. եթէ սիւնը ծռի, ամբողջ տունը միատեղ կը ծռի, սենեակները կը խախտին, կարասիներն ուղիղ դիրքի մէջ չեն մնար. ողնայարը ծռելով, հետը կը ծռէ ողնածուծն իր անթիւ անհամար ջլակծիկներով, կը ծռին կողերը, կը տճեւնայ լանջային վանդակը, ուսերն իրենց հորիզոնական միաձեւութենէն կը շեղին, անրակները դէպի դուրս և վեր կը ցցուին, և դժուար չէ կարծեմ երեւակայել թէ՛ այս վիճակին մէջ՝ կը նշատուին բազմեամ ջիղեր, կ'ազդուին թոքերը, սիրտը. որոնց արդիւնքը կ'ըլլայ, դժբաղդաբար, սրտի հիւանդութիւններ, թոքերու փափկութիւն և անարիւնութիւն, ողնածուծի ճնշում, և այլ և այլ ջլաթութիւններ, ոսկրափուտ ակտեր, ինչպէս նաեւ ազդերու անբնական տճեւութիւններ, կոնքի անդարմանելի կորութիւններ, որոնք ապագային մեծամեծ փորձանքներ կրնան բերել աղջիկներու գլխուն, երբ ասոնց հարսնութեան և մայրութեան ժամն հնչէ: Աւելորդ կը համարեմ թուել ձեզի՝ ողնայարի ծռութիւններու կանխարգել միջոցները, որոնք նոյնն են եւ չեն տարբերիր բնաւ այն միջոցներէն, զորոնք յիշեցի քիչ մը առաջ, կարծատեսութեան և ուղեղի ծանրութեան վրայ խօսած ատենս:

Վարժարաններու յաճախողէպ հիւանդութիւններ են հազը, հարբուխը, և պատճառունին վարժարանի օդին ապականութիւնը, փոշելից միջնորոտը, շարունակական օդահոսանքները, անկանոն եւ յոգնեցուցիչ դրօսանքներն եւ անզգուշութիւնները՝ ցրտառութեան դէմ: Մեր վարժարաններուն մէջ պակաս չեն բնաւ հարբուխն ու հազը, որոնք առերես թէեւ չա'տ ոչինչ բաներ մը կ'երեւան, բայց կրնան մեծ հիւանդութիւններու դուռ բանալ: Չանոնք անհետ ընելու

համար, նախ պէտք է մեր աշակերտներուն եւ աշակերտուէիններուն սորվեցնենք պատշապարտիլ ցուրտի դէմ, յետոյ վարժարանին օդահոսանքները խափանենք, զբօսանքները կանոնաւորենք՝ առողջապահական պատուէրներու համաձայն. մաքրենք վարժարանին փոշին, որ թշնամի է հազին, եւ որ՝ աշակերտներուն քիթին մէջ լեցուելով, ո՛չ միայն անոնց ազատ շունչը կ'արգիլէ, այլ եւ կրնայ անոնց մարմնին մէջ տարածել տեսակ տեսակ միքրոպսներ. պէտք է որ աշակերտներուն շարունակ թարմ օդ չնչիլ տանք: Երբոր մարդս շարունակ սենեակի մը մէջ փակուած մնայ առանց անոր պատուհանները բանալու, գիտէք որ հետզհետէ զայն կը լեցնեն իր թոքերէն դուրս վտարած ածխային թթուով, որուն ի՛նչ աստիճան մահացու ըլլալն յայտնի է արդէն: Հազը, հարբուխը, այո՛, կրնան մեծ հիւանդութիւններու դուռ բանալ, յաճաջ բերել թոքաբորբը, թոքապարկաբորբը, եւ այլն. պէտք է որ անհետ ըլլան անոնք մեր վարժարաններէն:

Այս պատճառներով է դարձեալ որ վարժարանի աշակերտներ շարունակ ենթակայ կ'ըլլան կոկորդի, կողկողիթի, ականջի, լորձնագեղձերու, խոչակի այլ եւ այլ հիւանդութիւններու, որոնց վրայ ծանրանալ աւելորդ կը համարիմ:

Իժիկներ դպրոցի հիւանդութիւններու կարգը դասած են ժանտատենդը, որուն պատճառը թէեւ ոմանք ցրտառութիւնն եւ ստամոքսի խանգարումները կը համարին, բայց հաստատուած է այսօր, որ խմուած ջուրն է անոր գլխաւոր պատճառը. խմուած ջուրը, այո՛, եթէ աղտոտ ըլլայ, եւ եթէ՝ ունենայ այն մօտիկութիւն կոյուղիներու ուրոնցմէ քաղելով Հէպտերտեան կոչուած միքրոպսները, կ'ապակայի եւ կ'ըլլայ յիւսսաբեր: Այսպիսի ջուր մը, երբ մարսողական գործարանին մէջ մտնայ, հոն տեսակ տեսակ խանգարումներ յառաջ կը բերէ, բնութեան կանոնաւոր գործառնութիւնները վերիվայր կը չրջէ եւ գործունէութեան դաշտ մը կը պատրաստէ իր պարունակած միքրոպսներուն,

որոնք երեւան կը հանեն այն անտանելի հիւանդութիւնը, զոր կ'անուանենք քիժօ: Տեսնուած է որ ամբողջ վարժարան մը, աղտոտ ջուրի միջոցաւ վարակուած է ժանտատենդէ. աշակերտը կերպով նայելու ենք միշտ որ մեր դպրոցներուն մէջ խմուած ջուրն ըլլայ բժշկապէս մաքուր:

Յիշատակած հիւանդութիւններէս զատ, վարժարաններու հսկող ըժիկներ դիտած են որ աշակերտները կ'ունենան նաեւ երբեմնակի ջերմեր, զորս անուանած են դպրոցական կամ բարոյական ջերմ. ասոր պատճառը դարձեալ մտքի չափազանց յոգնութիւնն եւ ուղեղի ծանրաբեռն վիճակն է, ինչպէս նաեւ տեսակ տեսակ բարոյական յուզումները, զորս աշակերտները կ'ունենան դասերու մէջ տկար ելլելու եւ պատժուելու վախով: Մեր դպրոցներու մէջ շատ չօչափելի է այս ջերմը. հերիք է իրիկուան մը դէմ վարժարան մը մտնալ եւ ջերմաչափով դիտել աշակերտներուն մարմնին տաքութիւնը, զոր ընդհանրապէս 38⁰ կամ 38⁰,5 աստիճանէն պակաս չափի դառնաք: Դպրոցական ջերմ ունեցող աշակերտներն յոգնած եւ կարմրած դէմք մը կ'առնեն, աչքերնուն մէջ արիւն է քալած, գլուխին ծանր է, պառկիլ քնանալ կ'ուղեն բայց երբ արձակուողին ժամն հնչէ, անմիջապէս կը փոխուին, կը սթափին, կ'արթննան: Մանկավարժն աշակերտներուն այս վիճակին վերահասու ըլլալու կարող պէտք է ըլլայ եւ բնաւ պէտք չէ նեղէ զանոնք. մաքուր օդի մէջ հանելու, անմիջապէս զբօսանք ընել տալու է անոնց, եթէ ոչ՝ ծանրապէս կը հիւանդանան:

Դպրոցական իկանքի մէջ աշակերտները կ'ունենան նաեւ անարիւնութիւն (anémie). անարիւնութիւնն է արեան տկարանալը, ջուր կարիլը, որուն մէջ արիւնի սպիտակ գնտակիկները կը շատնան. ասոր պատճառն է՝ անոնց ուժ, ռզեւորութիւն եւ գոյն տուող, բնութիւն Hemoglobine ըսուած նիւթին նուազիլը: Դնտակիկներու բոսորիլը շատ պատճառներով կրնայ նուազիլ. — անբաւական

անհագուութիւնը, նստողական կեանքը, արեւէ զուրկ, ապականեալ օդի մէջ ապրելը, մտային չափազանց յոգնութիւնները, ստամոքսի յաճախակի խանգարումներն եւ արիւնհոսութիւնները, վատապէս կ'ազդեն Hémoglobineին եւ կը տկարացնեն կը տըժգունեն արիւնը: Արիւնի տկարութեան հետեւանքն է գունատութիւն, անզօրութիւն, անմարսողութիւն, սրտի բաբախումներ, գըլխուցաւեր, ջղացաւեր, նիհարութիւն եւ հիւծում որոնց ենթակայ աշակերտներ եւ աշակերտուհիներ, աւաղ, պակաս չեն մեր վարժարաններուն մէջ: Արիւնի տկարութիւն յառաջ բերող պատճառները մեր վարժարաններէն հեռացնելու ջանադիր ըլլալու ենք, ընելով ինչ որ կարելի է, հսկելով աշակերտներուն մաքի յոգնութիւններուն, առած սնունդին, եւ չզրկելով դանոնք արեւէ եւ օդէ: Օդը՝ արիւնի կենդանութիւն կուտայ, արեւը՝ անոր գնտակիկներուն գոյն կուտայ. այս նպատակաւ է որ Եւրոպայի մէջ ո'չ միայն դպրոցականները, այլ եւ թոքախտաւորներն արեւի մէջ շարունակ կ'ապրեցընեն:

Դպրոցներու մէջ առաջ եկած այսչափ անտարանական վիճակներ եւ զանազան տըկարութիւններ, յայտնի է որ, կ'ազդեն խորապէս ջղային դրութեան, անոր կանոնաւորութեան ներդաշնակ գործառնութիւնները կը խանգարեն, որով ահա կը փոխուի տակաւ աշակերտներուն հոգեկան վիճակը, եւ կ'ըլլան դիւրագրգիւ, ցասկոտ, երկչոտ, ծոյլ, յողդողդ, դանդաղ, տխուր, մոլի. եւ օր մ'ալ կ'ըլլան «ջղային» կոչուած դժբաղդ արարածներ: Ջղային վիճակի արդիւնք է՝ ջղարութիւնը (histerie), ջղահիւծութիւնը (neurasthénie), Ժարմախաղը (chorée) լուսնոտութիւնը (épilepsie) եւ այլն, որոնք արդի քաղաքակրթեալ աշխարհի մէջ կը խաղան շատ տխուր դերեր եւ որոնց շատ ու շատ օրինակները մեր ընտանեկան յարկերու մէջ ալ սկսած են երեւիլ շատոնց՝ իրենց ծնունդը դպրոցէն առնելով: Մեր աշակերտներուն եւ աշակերտուհիներուն ջղայնութեան պատճառը միայն իրենց դպրոցներու հակառողջապահական կեանքը չէ, այլ եւ դատարար

րակներու եւ դատարարականներու կոշտ ու բիրտ վարմունքը, եւ յուզիչ պատիժները, որոնցմէ մեծ ուշադրութեամբ հետի պահելու ենք մեր տղաքը, մանաւանդ արքունքի հասած պատանիները, եւ առաջին դաշտանը դեռ նոր ողջունող աղջիկները, յիշելով թէ՛ այդ ժամանակները մանկական հասակի ամենէն վտանգաւոր ու փափուկ վիճակներն են, եւ շատ դիւրութեամբ կրնան սոսկալի հիւանդութիւններու մայր ըլլալ: Չափաւորելու ենք նաեւ անոնց տարեկան քննութեան պարտականութիւնները, որոնք ոչ նուազ մեծ դեր կրնան խաղալ վերոյգրեալ հիւանդութիւններու ծագումին մէջ:

Դպրոցի մէջ ծագած հիւանդութիւններու շարքը ձեզի գծած պահուս, չեմ մոռնար անցողակի յիշատակել նաեւ այն տխուր վիճակը, զոր անտեսութեան ախտը կը կոչեմ եւ որուն կ'ենթարկուին միշտ՝ մեր խեղճ դպրոցականներն եւ ուհիները. անունը չեմ տար այդ անտին որ աւելի դպրոցի մէջ ծնունդ կ'առնէ եւ սոսկալի աւերներ միշտ կը գործէ, դպրոցի քաղցրաբոյր դարաստանին մէջ, անոր հոտեւան ծաղիկները, դեռ անփթիթ վարդերը եւ նորահաս շուշանները տարածած քաղելով: Դանինք տեսած եմ եւ քանինք կը տեսնանք...: Չորս աչքով հսկելու ենք՝ չա'տ կանուխէն՝ մեր աշակերտներուն եւ աշակերտուհիներուն, հետաւ մուտ ըլլալու ենք սպաննելու անոնց շարունակութիւնները, թող տալու չենք որ կարգան անոնք գէշ վիպասանութիւններ, զանոնք հեռու պահելու ենք դատարի կեանքէ որ ծնող է մօլութեան, հեռու պահելու ենք այն ամէն պատճառներէ, որոնք գրգռիչ են երեւակայութեան եւ ծննդական գործարաններու: Այդ պահուն է ահա որ մեծ դեր պիտի խաղայ բժշկական հսկողութիւնը, բարոյական կրթութիւնն եւ փիլիքական կրթութիւնը. փարելով փարելու ենք ասոնց, որպէս զի մեր երկու սեւէ դպրոցականներն ալ փրկուին ու չըլլան այն ծերադէմ, կորաքամակ, նիհար, վտիտ, ստուերի պէս չըջող

մեռելատիպ կենդանի դիակները, զորոնք «Գերեզմանք Նրիտասարդաց»ը և «Աշնան տե-
րեւներ»ը ճարտարօրէն ներկայացուցած են
աբղէն և որոնց ապագան ուրիշ բան չէ,
բայց՝ հիւժախտաւոր մաշիլ կամ ջղագար
մեռնիլ:

Այս ախուր ախտին հետ դասելի են նաեւ
կարգ մը գէշ ունակութիւններ, զոր կ'ունե-
նան աշակերտներ և աշակերտուհիներ, ինչ-
պէս՝ մատ ծծել, տեղը միշտ, լալ եւ խըն-
դալ յաճախակի եւ առանց պատճառի, եղունգ
կրծել, բան գողնալ, սուտ հնարել, որոնք
մտային կամ ջղային վիճակներու յայտարար
լուին նշաններ, ըլլալով, կոստուխէն կը պա-
հանջեն ամենախիստ հսկողութիւն եւ բժշ-
կական խնամք: Դպրոցական հիւանդութիւն-
ներու կարգին անյարմար չէ յիշատակել նաեւ
կարգ մը վիրաւորութիւններ, որոնք յաճախ
կը պատահին դպրոցի մէջ, կամ դաստիարա-
կին ծեծերէն, կամ անխոհեմ զբօսանքներու
միջոցին եւ կամ աշակերտներու իրարու հետ
կռուելէն. տեսնուած է, այո՛, որ վարժապե-
տին փայտին հարուածներն աշակերտին գլու-
խը, երեսը, աչքը վիրաւորած են. տեսնուած
է՝ որ դպրոցի կառավարիչ մը բարկաճայթ
պոռչուածներու պահուն, «Ծօ՛», անդգամ
գլխի, հիմա՛ ոսկորներդ կը կոտորեմ» ըսած
ժամանակը, իրա՛ւ իրաւ խեղճ աշակերտին
փափուկ ուրքը, ճղճիմ թեւը կոտրած է:
Դեռ վերջերս կը կարգայի Semaine Médi-
cale թերթին մէջ՝ դատարանին առած պա-
տիժը դաստիարակի մը որ անգամ մը 9 տա-
րեկան մանուկի մը ապտակ դարնելով անոր
լսողութեան թմբուկը պատռած էր, եւ ան-
գամ մըն ալ 10 տարեկան աղու մը օկանջը
քաշելով անոր խլութիւն պատճառած էր:
Պատահած է որ զբօսանքի ժամանակներ մա-
նուկներ զիրար հրմշտկելով ինկած են քարի
վրայ, ունեցած են տեսակ տեսակ ոսկրաբե-
կութիւններ եւ այլ եւ այլ վէրքեր, ինչպէս
որ տեսայ եւ կարեցի տարիներ առաջ հատ մը
տասը տարեկան աշակերտի մը աջ յօնքին
վրայ: Այս վիրաւորութիւններուն ար-
գելք ըլլալու համար, մանկավարժին պար-

տականութիւնն է նախ ծեծող չըլլալ,
յետոյ հսկել աշակերտներուն որ զբօ-
սանքի ժամանակ ծեծկըւուք չընեն, քարե-
րու հետ գործ չունենան, եւ զմեղի ըսուած
բանը բնաւ եւ բնաւ վարժարանին դռնէն
ներս չմտցնեն. հսկելու է նաեւ որ աշա-
կերտներն իրենց երկայն եղունգներով կատ-
ուի պէս իրարու երես չճանկուտեն, որով
ընկեր ընկերի վրայ կրնայ ճանկատուքներ
բանալ եղունգներով և անոնցմէ ներս պատ-
ուաստել տեսակ տեսակ ախտաբոյժ աղտեղու-
թիւններ:

Դեռ չատ կրնայի երկարել դպրոցի հի-
ւանդութիւններու այս կարեւոր ցուցակը,
զոր կը վերջացնեմ երկու խօսք ալ ընելով
դուրսէն դպրոց բերուած հիւանդութիւնե-
րու մասին, որոնք ճանչցուած են փոխանցիկ
անուանով:

Այս հիւանդութիւններն են բորը, ոջիլը,
կապուտ հաղը, կեղծմաշկը, էնֆլիւէնցան,
որոնցմէ չա՛տ դիւրին է ազատ պահել վար-
ժարանը՝ անոնց ենթակայ աշակերտները
ներս չառնելով. ինչպէս եւ ծաղիկը, ծաղ-
կիկը, կամ ջրծաղիկը, հարսանիթը, կար-
մրուկը, օձիկը, որոնց դէմ կռուելու հա-
մար էր որ յանձնարարեցի ձեզ առանց պա-
տուաստի աշակերտ չունենալ, հետամուտ
ըլլալ բացակայ աշակերտներուն, և անոնցմէ
ծաղիկ, հարսանիթ, կարմրուկ կամ օձիկ
ունեցողները բնա՛ւ չընդունիլ վարժարան,
մինչեւ որ իրենց ապաքինութեան օրինական
քառսունքը հանեն եւ կատարելապէս մաք-
րուին այդ հիւանդութիւններուն առթած
թեփաւորութիւններէն. քանզի ճիշդ այդ
միջոցին է որ հիւանդութիւնները փոխադրիլի
եւ փոխանցիկ կ'ըլլան, չնորհիւ այն անթիւ
անհամար միջրոպներուն, որոնք կ'ապրին
հիւանդին մարմինէն թափած թեփերուն մէջ:
Հակառակ պարագային, եթէ այդ հիւանդու-
թիւններու ճարակումը արդիւրեւ կարելի չըլ-
լայ, այն ատեն միակ դօրաւոր միջոցն է,
գոցել բոլորովին վարժարանը, զայն օրերով
մաքրել ու հակահեղուկ եւ վերաբանալ մի-
այն այն ատեն, երբ համաճարակն անհետի
դուրսը:

Դպրոցի մը առողջապահութիւնը կատարեալ ըլլալու համար, պէտք է որ դպրոցի մէջ հիւանդութիւններ չըլլան եւ չունենան գոյութիւն այն ամէն պատճառները, որոնք հիւանդութիւն կը ստեղծեն:

Դպրոցի մը հիւանդութիւնները արգիլելու համար է որ առողջապահները խորհուրդ կուտան շարունակ՝ զբաղիլ նախ աշակերտներու մարմնային առողջութեամբ, եւ ուշադիր ըլլալ գլխաւորապէս՝ անոնց ֆիզիքական օրինաւոր դաստիարակութեան. մանկավարժութեան եւ դպրոցական առողջապահութեան կենսական մէկ մասն է ուրեմն ֆիզիքական դաստիարակութիւնը, որ նիւթ պիտի ըլլայ մեր յաջորդ դասին:

ՏՈՔՅ. ՎԱՅՐԱՄ ԹՈՐԳՈՍԵԱՆ

ՀԱՇՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՍՊԻՒՂԻ ԳԱԼՅԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՅԻ

ԽՆԱՄԱՆԱԼՈՒԹԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Տէր,

Պատիւ ունինք Ձեր Բարձր Սրբազնութեան մատուցանելու Գալֆեան Աղգ. Որբանոցին անցեալ 1904 տարւոյ ելեւմտից մատակարարութեան հաշուեցոյցը, որու կըցորդուած է նաեւ Որբանոցին շինութեան ի նպաստ կատարուած հանգանակութեան հաշիւը, ինչպէս նաեւ մէկ ամփոփումը շինութեան յանձնաժողովի հաշուոյն որ արդէն կանխած է Ձեր Բարձր Սրբազնութեան մատուցանելու ուղղակի իր հաշուեցոյցը, հաշուական տուեմաներով ու թուղթերով հանդերձ:

Ինչպէս կ'երեւի մատակարարութեան հաշուեցոյցէն, Որբանոցի սնտուկին 1904 տարւոյ մուտքն եղած է 813.84½ օսմ. լիրա, իսկ ելքը 773.55½ լիրա, որով գոյացած է 40.29 օսմ. լիրայի հասութից առաւելութիւն մը, որ բարդուելով նախօրէ տարիէն մնացած պահեստի գումարին վրայ, ներկայ տարւոյ յունուար 1ին կ'ունենանք 642.91½ օսմ. լիրա: Իսկ շինութեան վերաբերող կրկին

հաշիւներէն կը յայտնուի որ 1904ին հանգանակուած է ի նպաստ շինութեան ծախուց լ. 0. 706.36, որ աւելնալով նոյն տարւոյ յունուար 1ին դարձեալ շինութեան հաշուոյն պատրաստ գտնուած 520.50 լիրայի գումարին վրայ, կը կազմէ ընդ ամէնը հանգանակութեան արդիւնքը 1226.86 լիրա օսմանեան, որմէ յանձնաժողովոյն տրամադրութեան ներքեւ դրուելով 1183.44 լիրա օսմանեան, աւելցած է և այս հաշուէն 43.42 լիրա, իսկ Յանձնաժողովը խնամակալութենէն ընդունած գումարին վրայ աւելցնելով նիւթեղէններու վաճառումը և դրամի փոխանակութենէն գոյացած գումարները, ծախք ըրած է շինութեան և կահաւորման նախնական պիտոյից համար 1205.72½ լիրա օսմանեան:

Որբանոցին մատակարարութեան վերաբերող դրամական ու հաշուական գործառնութեան մանրամասնութիւնք պիտի տեսնուին հաշուետւմարաց մէջ. զորս հաշուեցոյցին հետ կը ներկայացնենք Ձեր Բարձր Սրբազնութեան, բայց իբր ընդհանուր եղբակացութիւն հաշուոյ՝ թերեւս աւելորդ չլինիր մասնաւորապէս յիշել թէ 1904ին Որբանոցը մատակարարուած է ոչ միայն առանց պարտք թողուելու, այլև՝ ինչպէս յիշուած է ի վերեւ՝ հասոյթի յաւելուածով մը և միանգամայն նոյն շրջանին մէջ տասնեկինը տարուան, այն է՝ 1300էն մինչև 1318 կալուածական յետեալ տուրքերն ևս հատուցուած են. նոյնպէս Որբանոցին վերաշինութիւնն ի կատար ելած է, առանց պարտք թողուելու, կատարուած հանգանակութեան արդիւնքով:

Անցեալ շրջանին խնամակալութեանս մեծագոյն զբաղումն եղաւ Որբանոցին վերաշինութեան և հանգանակութեան գործը: Նախկին չէնքն իր հնութեան և անբաւականութեան պատճառաւ անյարմար եղած էր այլ ևս թէ՛ բնակութեան եւ թէ՛ ծրագրուած բարեկարգութեանց գործադրութեան: Ահա հուն ուրախութիւն կը զգանք տեսնելով որ այս մեծ կարօտութիւնը գոհացում գտած է այլ ևս, շնորհիւ բարեւէր անձերու ձեռնտուութեան, և Որբանոցը վայելչապէս վերաշին

ուած ու ընդարձակուած է՝ առողջապահիկ պայմաններու համաձայն, միանգամայն կանոնադրուած այնպիսի կարեւոր բաժանումներով, որ ոչ միայն պատասպարելոց կ'ապահովեն հանգստաւէտ բնակութիւն մը և կը դիւրեն օգտոնին սպասարկութիւնն ու հսկողութիւնը, այլ և կը ծառայեն ուսումնական և արհեստական ճիւղերը պատշաճ կերպով կազմակերպելու: Բայց արժան է դիտել որ միւս կողմէ սկսած է աճիլ հետզհետէ սանուհիներու թիւը, որ մինչդեռ 1904 թուականին սկիզբը 35ի կը հասնէր, նոյն տարւոյ վերջ յանգեցաւ 61ի և չարունակ ամէն կողմէ անտէրունչ աղջիկներ կը ներկայացուին, Որբանոցն ընդունուելու թախանձանօք, թէ և այլ ևս բաց տեղ չէ մնացած: Անցեալ շրջանին երկու սանուհիներ ամուսնացուցինք: Օրիորդ Մարիցա Բազմանեան՝ Յակոբ էֆ. Շամլեանի հետ, որ կը բնակի Լէնկիւրիւ. և Օր. Չարուհի Մազթաղինէ Միհրանեան՝ դերձակ Ռուբէն էֆ. Չարքեանի հետ: Ունինք երկու սանուհիներ ալ, խօսեցեալ, որք պիտի ամուսնանան տարւոյս ընթացքին մէջ:

Թէ և հաշուեցոյցին մէջ Որբանոցիս ելեւմուտքը հաւասարակուած կը տեսնուի, այսու հանդերձ Որբանոցն իր տարեկան որոշեալ ծախսոց դէմ նոյն քանակութեամբ հասոյթի հաստատուն աղբիւր չունի, և պատահական նուէրներն ու բաժանորդագնի արդիւնքներն են որ պիտի գան զուգակշեւել ելեւմուտքը: Գլխաւոր հաստատուն հասոյթն է Օգոստոսիսու կայսեր առատագութ ողորմութեամբը շնորհուած օրական 20 օխա հացն ու 7 ու կէս օխա միսը, որ մօտաւոր հաշուով 200 լիրայի գումար մ'է, ինչպէս նշանակուած է հաշուեցոյցին մէջ, քանի մը կալուածներէ առձուռ Վարձուց տարեկան գումարը, որ կը կազմէ 47,40³/₄ լիրա և թոշակներու արդիւնքը 72,63 լիրա, ըսել է անցեալ շրջանի հաշուով 813 լիրա ծախուց դէմ 365 լիրա ունինք գերթէ: Միւս կողմէ, սանուհեաց թուոյն յաւելման պատճառաւ պէտքերն ալ աւելնալ կը սկսին. Որբանոցի յատկացեալ հացն ու միսը արդէն չբաւելով՝ ամէն օր 30 օխա հաց կը գնուի և նոյն համեմատու-

թեամբ նաև նպարեղէններ ևն. միեւնոյն պատճառաւ ուսումնական ճիւղի ծախքն ալ աւելցնելու հարկն առաջ եկած է, քանի մը նոր պաշտօնէից անուանումով և դպրոցական զանազան պիտոյից յաւելումով: Սակայն Որբանոցն ալ եկամուտի ապահով միջոցներէ զուրկ, որքան ալ պատասպարելոց թիւն ու ծախքը աւելցած ու խնամակալութեան նորագոյն կարգադրութեանց հետեւանօք նոր զոհողութիւններ ընելու հարկին առջև կը գտնուի, այսու հանդերձ կայ հասոյթի ուրիշ աղբիւր մը, զոր խնամակալութիւնս ոչ նուազ ապահով կը նկատէ և այն է հանրային համակրանքը, որ գոհութեամբ կը հաստատենք թէ յաւելցած է զգալապէս նոյն բարեգործական հաստատութեան հանդէպ: Այս համակրանքն արդարացնելու համար՝ խնամակալութիւնս՝ ուշադիր է միշտ Որբանոցին ներքին բարեկարգութեան և բարւոք մատակարարութեան և նախանձախնդիր ներկայելու միշտ Ձեր Բարձր Սրբազնութեան և միանգամայն համակիր հասարակութեան՝ ելումտից ընդհանուր հաշիւը:

Խնամակալութիւնս չյաւակնիր ձեռք բերուած յաջողութիւնը վերագրելու իր ջանքերուն և կարողութեանը, այլ կը խոստովանի անկեղծօրէն թէ կը պարտի զայն բարեսէր անձերու թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական օժանդակութեան, որոնցմով կարելի եղած է յանձանձել, բարեկարգել ու վերաշինել այս բարեգործական հաստատութիւնը, երկար լքումէ մը ետքը: Հետեւապէս իր ջերմագին շնորհակալիքը կրկին և կրկին կը յայտնէ այն ամէն աշխուսաբոս անձերուն որք զանազան միջոցներով կը խրախուսեն զմեզ՝ տանելու այս պաշտօնը, նոյնպէս մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ չինուութեանց Յանձնաժողովոյ անդամոց որք խնամակալութեանս վրայէն մեծ բեռ մ'առին և մեզ գեղեցիկ չէնք մը յանձնեցին: Իսկ Ձեր Բարձր Սրբազնութեան շնորհած վստահութեան, պաշտպանութեան ու դիւրութեանց համար, որք իր զօրավիգն եղած են ամէն առթի մէջ, խնամակալութիւնս երախտապարտ կը դգգայ զինքը, և կատարելապէս վըս-

տա՛հ որ պիտի շնորհուն իրեն միշտ պէտք
եղած օգնութիւնները, կը շարունակէ իր
բարեգործական պաշտօնը:

Խոնարհելով ի համբոյր Աջոյ Ս. Հօրդ.

Մնամք խորին ակնածանք

Ի դիմաց Խնամակալութեան

Գալֆանեան Աղջկանց Ազգ. Որբանոցին
Խառնելով.

Ասեմադպիր

Ասեմապետ

ԻՍԿՈՒՅԻ Կ. ՓԱՓԱՋԵԱՆ ՍՐԲՈՒՅԻ Կ. ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԼԱՍԲՈՅՐ

Զովուկ ծովափին՝ իրիկուան դէմ՝
կը հըմայէ մենուկ հոգիս.

Մերթ ձրգուելով հոն կը դիտեմ
— Ինչպէս սիրա՛ր՝ սէրէն մաքնիս:

Խարակներուն առջեւ որոնք
Յաւերթական մըրմունջն ունին
Ալիքներուն մըշտանորոգ,
Ու թովանքը՝ մեծ Սնհունին,

Ժամերով միտքս անբաւութեան
Խորհուրդներուն մէջ թափառկոտ՝
Ես կը մընամ այդպէս, — տարտամ
Ըզգայութեանց հետ միշտ հաղորդ:

Անհըպելի բարձրութեանց, կոյս
Ու խըռովուն ծըփանքներուն,
Դաշնակութեանց ու հոգեյոյդ
Իրերուն դէմ երբ կը պըշնում,

Անըրջօրօր յուշ մը թեթեւ
Յանկարծական զարթօնքի պէս,
— Փըրփուր-պարիկ մը բացաթեւ —
Կ'անցնի մուր ու խոնջ մըտքէս...

... Համբոյր մ'է ան բոլորանուէր՝
Բաղուած առջի սիրոյս պահուն:
Սիրտն ալ չունի՞ իր խորակներ
Ուր կը փըշին սէրերն անհուն:

Ս. ՈՒՂՈՒՐԵԱՆ

ՀԱԿԱԼՔՈԼԱԿԱՆ

ՊԱՅԳԱՐԻՆ ՇՈՒԲԸ

Այս լրագրական մրցման ու հակալքուա-
կան պայքարին հաստատիչը, ինչպէս առիթ
ունեցած ենք ըսելու, անոնցմէ չէ որոնք կը
շատանան անցողութեան մրցանակ մը նուիրե-
լով կամ նպաստ մը ընելով որ եւ է հան-
րագուտ նպատակի համար: Ինքը՝ Թաւաշան-
ճեան Էֆ.ն՝ նոյնչափ գործի որքան գրչի
մարդ, սրտանց կը փարի իր այս կարգի նա-
խաձեռնութիւններուն եւ ուշադիր կը հե-
տեւի անոնց ընթացքին, ի հարկին՝ գրիչ ալ
շարժելով: Այսպէս, ներկայ պարագային մէջ,
փոխանակ ինքնամփոփուելու ընթերցողի ու
գատողի դերին մէջ՝ Պոլսահայ թերթերուն
հրատարակած հակալքողական յօդուածներուն,
մինչեւ որ ժամանակը դայ անոնցմէ լաւա-
գոյններն ընտրել եւ մրցանակի արժանիները
որոշել տալու քննիչ մարմինն, կը փութայ
պատասխանել Բիւզանդիոնի մէջ առիչ առաջ
երեւցած «Երկու խօսք» խմբագրականին եւ
ուրիշ լրագիրներու մէջ երեւցած կարգ մը
գրուածքներու, «Մամուլ եւ Քննադատու-
թիւն» վերնագրով յօդուածներու շարքով
մը, որոնց առաջինին վերջին մասը կ'արտա-
տպենք ստորեւ: Չենք կարծեր որ Մասիսի
ընթերցողներուն զրկանք մը ըրած ըլլանք,
Պ. Բիէռ Արէսի յօդուածին Բ. մասին
վրայ առաջնութիւն տալով այս արտատպու-
մին, մօտէն գիտակ ըլլալով թէ որքա՛ն հե-
տաքրքրութիւն կ'առթէ հանրութեան՝ այս
հակալքողական պայքարին վերաբերող ամէն
նորութիւն. եւ Թաւաշանճեան Էֆ.ի գրուածքը
ո՛չ միայն մասնաւոր հրապոյր մը ունի իր
ինքնայատուկ, պարզ, անկեղծ ոճովը, այլ
անգամ մըն ալ կը պարզէ իր համոզումը,
իր profession de foi՛ն՝ արեւցութեան վրաս-
ներուն եւ դայն կասեցնելու ձգտող այս
լրագրական ձեռնարկի մասին:

Խմբագրութիւն «Մասիս»ի

Մարդ մը ի՛նչ համեմատութեամբ որ իր
օղիի գաւաթին ջուրն աւելցնէ, նոյն համե-

մատուցեամբ իր եւ իր ընտանեաց ապեր-
ջանկութեան բաժակին դառնութիւնը կը
պակսեցնէ, եւ ո՛չ թէ կ'աւելցնէ, որպէս ու-
մանք կ'ուզեն որ հաւատանք: Բաջութիւնն
այն է որ ուրիշ տեղ փնտռէ մարդ իր ցա-
ւերուն դարմանը եւ ոչ թէ օղիի գաւաթին
մէջ: Ասով միայն ժամանակաւոր անդգա-
յութեան եւ թմրութեան կ'ենթարկէ ինք-
զինքը, ուրիշ սթափելուն՝ աւելի դառն կը
գտնէ իր բուն վիճակը: Ամէն խնդրոյ մէջ
«կինը փնտռէ» կ'ըսէ Գաղղիացին. «կինը
եւ գինին» կործանեցին զինքը, կ'ըսէ Ամե-
րիկացին. վերջինն աւելի ընդարձակ է, քանի
որ օգելից ըմպելիքն անբարոյականութեան
կը մղէ զմարդ, ինչպէս որ անբարոյական
մարդը զօրաւոր ըմպելիք կը փնտռէ. ասոնք
անբաժան երկւորեակներ են: Ինչ որ սեր-
մանեա, դայն կը հնձեա: Բանի՝ հայրեր կան
որք ի սրտէ կը փափաքին որ իրենց զաւակ-
ներն ոգելից ըմպելիք բնաւ չգործածեն.
բայց կը մոռնան որ անձնական գէշ օրինակ-
նին բաղձացածնուն հակառակ արդիւնքը
պիտի տայ: Մեծ մարդիկ անոնք են որք
դժուարութեանց կը յաղթեն: Ոգելից ըմ-
պելեաց գործածութեան ունակութիւնը
դադրեցնելը շատ դժուար գործ է, թերեւս
կարծուածէն ա՛լ աւելի դժուար, կ'ընդու-
նիմ: Նկարագրի մեծութեան հասնելու կը
քաջալերեմ սակայն, յորդորելով որ յաղթեն
այն բարոյական դժուարութեան, եւ որքան
դժուարաւ յաղթեն անոր՝ այնքան մեծ պիտի
ըլլայ իրենց յաղթանակը:

Ոմանք ալ կ'ըսեն թէ այս մոլութիւնը
խեղճ գործաւորներուն յատուկ է, եւ արդէն
խեղճերը բաւական թշուառ չե՞ն միթէ որ
եղինք իրենց քարոզենք նոր բնութիւն:
Այս փաստն իրաւէն նոր է ինձ համար: Չեմ
գիտեր ես երկիր մը—թէեւ ոչ շատ՝ բայց
բաւական ուսումնասիրած եմ արեւելեան
վերաբերեալ խնդիրները—որու վիճակագրու-
թիւնը կը ցուցնէ թէ բարեկեցիկ դասակար-
գը շատ աւելի պակաս կը գործածէ ոգելից
ըմպելիք քան գործաւոր դասակարգը: Գոր-
ծաւորներն աւելի բաղմամբ են ամէն տեղ,
եւ գինովցած ատեննին փողոցները կ'ընան,

որովհետեւ միջին կամ հարուստ դասակարգի
մարդոց պէս՝ բարեկամ մը չունին որ իրենց
թեւէն բռնէ եւ տուն առաջնորդէ, կամ կառ-
քի մը վարձքը տայ այս միեւնոյն գործողու-
թեան համար: Բայց որովհետեւ «փողոցներէն
թիւրով չեն ժողվեր» բարեկեցիկ գինովները,
ասի ըսել չէ թէ ասոնք աղատ են այս վի-
ճակէն: Իմ մասին խօսելով՝ ես շատոնց շոհ
պիտի ըլլայի եթէ բնաւ գործաւոր դասա-
կարգին օգուտ մը չունենային այս գրու-
թիւնները՝ այլ ունենային, թող ըլլայ շատ
փոքր մասամբ իսկ, բարեկեցիկ մասին: Ես
այնքան համեստ էի եւ եմ իմ ակնկալու-
թեանցս մէջ, որ ամբողջ դասակարգի մը օ-
գուտը չէ, (որքան ալ փոքրաթիւ չըլլայ այդ
դասակարգը) հապա նոյն իսկ մէկ երկու
անձինք օգտուին եթէ, դո՛ւ կը մնամ ես:
Ոճրագործութեանց մեծ մասին մէջ, ընդուն-
ուած է որ ոգելից ըմպելիքը մեծ դեր կը
խաղայ, աւա՛ղ, ո՛չ միայն գործաւոր դա-
սակարգին մէջ: Իրաւ է որ ընկերութեան
որքան բարձր ու՛ կրթեալ դասակարգին
պատկանի արեւցող մը՝ այնքան ծանր կ'ըլ-
լայ իր պատասխանատուութիւնը եւ նոյն հա-
մամատութեամբ իր վարկաբեկութիւնը:
Մարդու մը բարոյական ազատութիւնն հոն
կը վերջանայ ուր ուրիշի մը կըսկսի. արեւ-
ցողը սակայն ու է սահմանի գոյութեան
գիտակցութիւնը կորսնցնելով, հասարակու-
թեան խաղաղութիւնը եւ հանգիստը կը վեր-
դուլէ եւ անոր իրաւունքին կ'ոտնձգէ: Ժո-
ղովրդական առածը կ'ըսէ. «Խենդը գինովէն
վախցեր է»: Ան որ արեւցող է, թող իր
պարագան տարբեր չկարծէ ուրիշինէն. իր
ցաւը անդարմանելի, իր կորուստը անդառ-
նալի, իր վիշտերը անսփոփելի են՝ կ'ըսէ
(իր զրացիինէն բնաւ տարբերութիւն չունի
թէեւ,) եւ այս իրեն պատրուակ բռնելով կը
լսմէ: Արեւցողութիւնն իր բնական ուղիղ եւ
պայծառ դատողութիւնը խանգարած է ամէն
ատեն, իսկ գինովցած ատենը խենդ մը վախ-
ցնելու աստիճան խելայեղած է: Մի՛ ըսեր
ինձի որ ալքովը իմ վրաս բնաւ աղդեցու-
թիւն չըներ: Ոմանք մէկ գաւաթով, ոմանք
տասը գաւաթով, բայց ամէն մարդ իր չա-

ժողով՝ կ'ազդուի ոգելից ըմպելիքէ և ինչպէս
Յիփոդիսին ոմանք թեթև տեսակէն և ուրիշ-
ներ միայն զօրաւոր տեսակէն կ'ախորժին և
կ'ազդուին, այնպէս ալ ոգելից ըմպելիք
սիրողները—ոչ իրր ամաթէօս, հապա իրր
մասնագէտ—չեն գոհանար մինչև որ այսինչ
տեսակով և այսինչ աստիճանաւ արբենան:
Մարդն անասուններէն կը տարբերի այնու զի
իմացական է. ալքովը կը նուազեցնէ այդ
իմացականութեան աստիճանն և հոսկ յե-
տոյ բոլորովին կը ջնջէ զայն: Մեռած մար-
դու մը մարմինը պահպանելու համար զայն
ալքովի մէջ դնելը, իսկ ողջ մարդու մը
մարմինը ջնջելու համար ալքովն անոր մէջ
դնելն ամէնէն ապահով միջոցն է: «Հատ
մ'ալ ինէ» ի գէշ սովորութիւնը ջնջելու աս-
մէնէն դիւրին միջոցը (treat, հրամցնել)
վճարումը դուռն ընելու փութալն է և եթէ
չյաջողիս, «ուրիշ առթիւ մը թողելու ես
որ ես վճարեմ» ըսել: Մէկ անգամէն մէկ
գաւաթ կը բաւէ, հիւանդութիւնդ (այսինքն
պաղդ կամ գլխու դառնալդ ևն.) բուժելու,
կամ ոչ անքնական, ոչ ալ վնասակար ակոր-
ժակդ յագեցնելու համար: Երբ երկուքի
կ'ենես, գիտցիր որ վտանգաւոր է առած
քայլդ. այս ըսածն եթէ գործադրես, դու
ալ ինձ չափ հակառակ պիտի ըլլաս չափա-
զանց գործածութեան ոգելից ըմպելեաց:

Յ. Ս. ԹԱԽՇԱՆՃԵԱՆ

(Իրզանդիոն)

ԻլինիՕն Ապահովագրական Ընկերութեան
կեանքի ճիւղին յարաճուն գործառնութեանց
վրայ ծանօթութիւն մը հրատարակեցինք
ասկէ առաջ: Ոչ նուազ ընդարձակ եղած են
նոյն Ընկերութեան հրդեհի ճիւղին զործառ-
նութիւնները: Կիմանանք արդարեւ թէ Իլի-
նիՕնի Արեւելքի Տնօրէնութեան ձեռքներ-
կայ տարւոյ Յունուար 1էն մինչև Մայիսի
վերջ՝ հրդեհի ճիւղին համար եղած վճարում-
ներուն րոպհանուր գումարը կը հասնի
119,375.40 ֆրանքի, որուն 18,316.80ը Կ.
Պոլսոյ զանազան արուարձաններու մէջ պա-
տահած հրդեհներու համար վճարուած և
մնացեալը գաւառներու մէջ:

ԽՄԱՌԱՐԱԿԱՆ ՆՕՐԵՐ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՆՏԱՏՈՒՄ

Բերկրութեամբ կը ծանուցանենք թէ
վեհ. Կայսրը բարեհաճած է երրորդ կարգի
Օսմանիէ պատուանշան շնորհել՝ Բերայի Հե-
ռազրատան Դեր-Տնօրէն եւ զանձապետ
Մկրտիչ էֆ. Գազանճեանի:

Կայսերական այս շնորհը, որուն կ'արժա-
նանայ Գազանճեան էֆ., նոր եւ բարձր հա-
ւաստիք մըն է իր արժանեաց ու կարողու-
թեան գնահատմանը, որուն առթիւ ջերմա-
պէս կը շնորհաւորենք զինքը:

ՎԻԷՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐԵ ԲԱՆ-
կալթի վարժարանին վկայականաց բաշխ-
ման ու ամսվերջի հանդէսը տեղի պիտի ու-
նենայ յառաջիկայ հինգշաբթի (23 յունիս)
միջօրէէն յետոյ ժամ 2½ին (Բ. Ե.), վար-
ժարանին հովանուտ եւ ընդարձակ պարտէ-
զին մէջ: Այս մրցանակաբաշխութիւնը, որ
եղանակին կրթական հանդէսներուն մէջ իր
ինքնայատուկ եւ ուշագրաւ տեղն ունի եւ
աշակերտաց ծնողքներէն զատ՝ ուսումնասէր
դասակարգին ալ հետաքրքրութիւնը կը չար-
ժէ, այս տարի պիտի կատարուի սովորականէն
աւելի ճոխ յայտագրի մը համաձայն զոր
պատրաստած է վարժարանին ձեռնհաս Տե-
սուչը՝ Հ. Գաբրիէլ Ծ. Վրդ. Մէնէվիչեան:
Կրթական ու միանգամայն երաժշտական ցե-
րեկոյթ մըն է այս, ուր երբ մէկ կողմէ ա-
շակերտներուն ուսումնական կարողութիւնը
ի յայտ կը բերուի եւ վարժարանին վարչու-
թեան տեղեկագիրը կը կարգացուի, միւս
կողմէ խմբերդ, նուազածութիւն, ընտանե-
կան թատերախաղեր, արտասանութիւններ
կը կատարուին՝ զաշնակի ու ջութակի ընկե-
րակցութեամբ զորս յաջողապէս կ'ածեն աս-
շակերտները:

ԳԱՏԸԳԻԻԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ վարժարանին
ամսվերջի հանդէսն ալ տեղի պիտի ունենայ
վաղը՝ կիրակի՝ ժամ 7ին (Բ. Թ.), իր սո-
վորական շքովը ու պէսպիսութեամբ լեցուն
յայտագրի մը համաձայն:

Ս. ԷՋՄԻԱՅԷՆԷՆ կը հաղորդեն թէ Ս. Հայրապետը եպիսկոպոս ձեռնադրեր է Տ. Նահապետ և Տ. Աշոտ վարդապետները, առաջինը նշանակուելով Շուշիի առաջնորդ, և երկրորդը՝ ձեռնադրանի անուշ, Պ. Կ. Կոստանդեանի տեղ:

ԳԱՒԱՌԱՅԻՆ երկու առաջնորդներու հրաժարման լուրը ծանուցուեցաւ շաբթուս մէջ: Տ. Յակոբ Աշոտ եպիսկ. առաջնորդ Սամսոնի և Տ. Վահրիճ Վրդ.՝ առաջնորդ Ռոտոսթոյի, հրաժարական մատուցեր են իրենց վիճակին Դաւառական Ժողովներուն որոնք ընդունելու են այդ հրաժարականները և տեղեկագրեր են Պատրիարքարան:

ԿԱՅՍ. ԲԺՇԿԱԿԱՆ վարժարանի քաղաքային ճիւղի այս տարուան 35 շրջանաւարտներէն տասը Հայ են, Տեարք՝ Կ. Տ. Ալլահ-վէրաի (Տոքթ. Ալլահվէրաի որդի), Լեւոն Ասլանեան, Կարապետ Սարգիսեան, Արթին Չէրչեան, Յովհ. Դըլըճեան, Սերովբէ Աղա-չրաքեան, Սամուէլ Ստեփանեան, Արմենակ Խաչատուրեան, Քերովբէ Ճէզվէճեան, Արմենակ Տիգրանեան: Ասոնք յաջողապէս ան-ցունելով իրենց աւարտական քննութիւն-ները, ստացան Տոքթորութեան վկայական-նին որուն առթիւ կը շնորհաւորենք զիրենք:

Մասնաւորապէս հաճոյք մըն է մեզի ծա-նուցանելը, թէ մեր աշխատակից Տոքթ. Կ. Ալլահվէրաի, որ ծանօթ է թէ՛ Մասիսի և թէ՛ ուրիշ թերթերու մէջ իր հրատարակած բժշկական հատակից յօդուածներովը, վերո-յիշեալ 35 շրջանաւարտներուն մէջէն առաջին հանդիսացած է իր պատրաստած քեզովը որուն նիւթը կը վերաբերէր ականջի հիւանդու-թեանց: Զերմապէս կը խնդակցինք իրեն և ամէն յաջողութիւն կը մաղթենք իրեն և իր շրջանաւարտ դասընկերներուն՝ բժշկական աս-պարէզին մէջ ուր կը թեւակոխեն:

ԱՏԱԲԱԶԱՐԻ Հայուհեաց վարժարանի ա-մալներջի հանդէսը և վկայականներու բաշ-խումը կատարուեր է այս չորեքշաբթի, եր-գերով, տրամախօսութիւններով և բանա-խօսութիւններով ու աղօթքով: Այս տարուան շրջանաւարտուհիներն են, Օրիորդք՝ Ագապի Ա. Թադեան, Մարիցա Յ. Անդրէասեան և

Սիրանոյշ Մ. Վարժապետեան (Կ. Պոլսեցի), Զարուհի Կ. Թօփուզեան, և Նուրիցա Տ. Վարժապետեան (Ատաբաղարցի), Բարուհի Ա. Թահմազեան և Հայկանոյ Կ. Հէլվա-ճեան (Նիկոմիդիացի), Զարուհի Ն. Պոլիկ-եան և Վերժին Ն. Ազարեան (Պարտիզակցի), Արուսեակ Ս. Յակոբեան (Իրոսցի), Եւնիկէ Կ. Մալխասեան (Ռոտոսթոյի) և Լիւսի Թ. Ղուկասեան (Զէյթունցի):

ՊԱՐՏԻԶԱԿԻ Ամերիկեան վարժարանին ամալներջի հանդէսն ալ տեղի ունեցեր է ե-րեքշաբթի, աւանդական կարգուսարքով, և վկայական ստացեր են չորս շրջանաւարտ-ներ՝ Պ. Պ. Երուանդ Պասմաճեան և Յով-հաննէս Կարազեան (Պարտիզակցի) Կարապետ Կարապետեան և Կարապետ Կոստանեան (Պոլ-սեցի):

ՄԱՆՉԷՍԹՐԻ Հայոց հոգեւոր հովիւ Տ. Յարութիւն քահանայ՝ եղիվարդեան ի Տէր հանդեաւ այդ քաղաքին մէջ ուր անկողնի կը ծառայէր երկու ամիսէ ի վեր Յուդարկաւո-րութիւնը կատարուեր է նախընթաց կիրակի, նախադասութեամբ Եւրոպայի Հայոց առաջ-նորդ Տ. Գէորգ եպիսկ. Իւթիւճեանի որ բաւա-կան ժամանակէ հետէ Մանչէսթր հաստատած է իր բնակութիւնը: Բարիղի Հայոց հոգեւոր հովիւ Տ. Վռամապուհ քահանայ, որ յատ-կապէս հրաւիրուած էր, հոգեհանգստեան պատարագ մատուցեր է: Հանդուցեալ եղի-վարդեան քահանան որ հաղիւ ութ ամսէ ի վեր Իզմիրէն Մանչէսթր ուղեւորած էր, տեղւոյն ազգայնոց համարումը գրաւած ըլ-լալով, իր մահը ցաւով համակեր է զամէնքը:

ՄԱՍԻՍԻ գաւառային այն բաժանորդնե-րէն, որոնք տակաւին չեն վճարած մեղ իրենց 1905ի բաժանորդագինը, կը խնդրենք որ հասցնեն զայն խմբագրութեանս, եթէ չեն ուզեր որ ընդհատուի իրենց թերթին առա-քումը:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ
Տէր Եւ ՏՃՕՐԷԳ—ՏՈՒԹ. ՆԴՈՒԱՐԴ. ՄԱՍԻՍ
Տպագրութիւն ԱՐԵՆՆԵՐ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆՍԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնեալ է Ռուսիո 1875ին
կը գործէ ուղղակի ճրանս. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ
Ընթացիկ ապահովգր. 339 Միլիոն Ֆր.
Դրամագումարի եւ պահեստի 38 Միլիոն Ֆր.
Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց
ԱՐԱՄ Ս. ԳԱՐԻՅԱՆՍ

Պոլիս, Հանքոնլո խան Եօ. 53
Դաւանները պատուաւոր գործակալներ կը
փնտռուին: 16—50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԻՐԵԱՆ

Պոլիս, Մարբուհնարար. Պարնաբան խան
Թիւ 26

Այլէն կարգի դառնալ կը ստանձնէ եւ
խնդրոյ առարկայ եղած գործերու համար
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ կը կատարէ եւ կործինք
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ
դառնալու եւ առեւտրական ու արհեստական
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը եւս մինչեւ հէտ օր ձիա-
բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կոր-
ծինք կը յայտնէ:

Օսմ. անօնիսմ բնկերութեանց ընդհանուր
ժողովոց մէջ բաժնեատէրերը առանց վարձի
կը ներկայացնէ:

Ապահովագրական գործառնութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական
բնկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող
անդեկութիւնները ձեռքարար կուտայ, եւ կը
յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կա-
րելուր եղած անդեկութիւնները իրմէ չստաց-
ուին, ապահովագրութիւն չի օտարագրուի:
Ապահովագրական իւրաքանչեւ հասուցման գու-
մարներու եւ փութարժէքներու գանձումը
եւս կը ստանձնէ:

Իսկ վարձքի մասին զիւրութիւն եւս
ժանութիւն կ'ընծայէ: 5—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԸՆԴՈՒՄ, ՄԵԾ ՓՈԴԱՅԻ ԹԻՒ 200

Կալանա-Սէրայի Լիսէին դէմ
Գե. Եե. Շք. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2
Երբակի օրերը ժամադրութեամբ 4—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



Հիմնեալ է Լոնտոն 1782 ին
ԿԸ ԳՈՐԾԷ Ի ՓՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ
ՈՆԳԻ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
Դրամագումարի եւ պահեստի դրամ
Պնգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ըստ կրօնի դէմ Ապահով-
ագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իւր պատուաւորութեամբ եւ իւրաքանչեւ
իւր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ կրօնի եւ
կառնակի դէմ մէկն առաւել անյարժ եւ
չարժաւոր ստացումը, յայտնաբերուող
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ՝ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. 3—4 մաս-
նով է առաւել քան 27,000,000 անգլ.
ոսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ առաւ-
ել Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիսթայիս խան, Պանգ Օրօմանի Բով
Ղալաթիս:

Փոխ դռնակալը է Պոլիս

ՌՈՒՐ. ԱՅԻԿԵԱՆ, ՃԻՎԱՆ, ԹԻՔԵԻԱՆ
Էմին պէյ խան Ֆնսյիւսան խան

Զինի, Իսթաբուլ
Ա. ԷՆՔԱՆԻՐՃԱՆ

6—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ը Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԴՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջապէս վճարուծ, որով Իւնիոնի ապահովագրուողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսանքաւորութիւններէն, որոնց կենթարկուին միշտ անանկնք. ոչ ոսւնաւորութիւն եւս չի ունի (աշտ mulation d'es bônéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքըրնք Օղլու

Մամնաճիւղ՝ Ղալաթիա, Խալէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր

քաղաքացի մէջ

7-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՑՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱԾՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՐԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԵ ՊԱՎԻԵՐ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւուն է Ի Կ. Պոլիս, Բուքսի Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրեմենակ, Պոլիս, Ալեքսան Խան,

7-10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սւնենայ, որովհետեւ լաւ մեքենայ
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՄԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՑՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ուրիշ անոթի
միանգամայն մեկնանք
կը գտնուին :

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հասաւտառւնը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

ՍԻՆԿԷՐԻ՝ յեղենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՅԵՐԵՄԻԱՍ
ԴՆԹԵՐԱՆԸ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին,
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

കുലകൃഷ്ണ

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

701.15

1. Սուլթան Համամ, թ.
2. Սուլթան Պէյազդիտ, թրամկէյի կայարանին դէմ, թ. 13.

ՄԿԻՏԱՐ

Զարչր Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի:

ԿԱՏԱՐԵԱՅ ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԻՒՆ:

Մասնանիւղեր գաւառաց բոլոր ֆաղաֆներուն մէջ :

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: 9

9-10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻՃԵԱՆԻ Թ=Դ.

Մանած գիրքերէն հետեւեալները կը գրա-
նուին Տէր-Մինասեան գրառուներ եւ մօրքա-
քաղաքիս միւս հոյ գրաւմանսնիւրուն քով:

hwasnr

178.

4-1111 1-1111 1-1111 2 10

Համանշանակ 2 15

Փարիզի մամուլական թիւնները 1 2

၂၀၁၇ ခုနှစ် ဇူလိုင်လ ၄ ရက်နေ့ ၅၀

Արուստակուն Թորուն 3 15


Հանրապետության 1 5

Աղղբուէք Քաղ: Տնեան: Թեան 1 4

[illegible]

3-10

ԱԶԴՈՒ ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՓՈՇԻ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ



Կ'ուզե՛ք հանգիստ ու մքեիկ-մքեիկ ֆանայ ու ազատի
սա աներես միջատներուն ցուած չարչարանքներէն. ԴԻՄԵՑԻՔ
ՈՒՂՂԱԿԻ:

ԽԱՉԻԿ ՖԷՍՃԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

Մահմուտ փառա Պաշի, պողաշանիին դէմ,
թիւ 261

Ար պիտի գտնէք թարմ եւ առաջին տեսակէն իրա ազդու
Տաճարի-ի միակ միջատապան փաշի, որ վարկհեապէս կ'ապահնէ ու կ'օչչացնէ մուկը
լուն (փիւր), ոչիւր: հանքը, մծեղը (օւլբիտիւն), ուսիքը (կիւլէ), բըրբըր, ցոսնիկ-ու-
սիչը եւ ուրիշ բնի մը վնասակար միջատներ ու ճճիներ. այն փաշիները մեծ ու պզտիկ
մասնաւոր ասփերու մէջ դըրած պտարտա կը ծախուին: Ուստի ամէն տնոնք որոնք
պէտք ունին ազդու միջատապան փաշիի եւ կ'ուզեն գիշերները անուշիկ-անուշիկ քնո-
նալ եւ առաջընթիւնն ին խանգարուած արթննալ, թող հաճին դիմել դեղարանս գնե-
լով տափ մը փաշի. քանի որ այս տեսակ պէտք մը գոհացնելու համար դեղարանս ունի
իր դիւրութիւնը՝ Պաշայ կտրեւոր եւ կեղծան մէկ տեղը գտնուելով: Աւելորդ նկատած
չենք ըլլալ հոս անգամ մը եւս ինչոցնելու թէ՛ Դեղարանս որ Պաշ. հասարակութեան շը-
նորհիւ քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ իր ազդարար գործու-
նելութեամբը, միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թարմութեամբ, դեղագրե-
րու արագ եւ ճշգրտակի պատրաստութեամբ, գիշերու չափաւորութեամբ եւ որ ունին է
արուեստին խղճամբ ցործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր ազնիւ յաճախողները:

Դեղարանս նաեւ Եւրոպական տան մը հետ ալ բանակցած ըլլալով ամէն շաբաթ Զուի-
ցերի-կան թարմ պտառաւորի թիւպեր (տըլ գալէթի) կը հասնին բաթալով եւ գումատա-
լին յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Յիշենք նաեւ ամէն որ Դեղարանս յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն մասնաւոր
բարբ. ծանօթ ԲԺԻՇԿ ԱԼԼԱՀՎԵՐՏԻ ԷՅ. որ ամէն Դ. Ե. Շա. օրեր ժամը 8—11 իրեն
դիմադ հիւանդները կը դարմանէ իր ծանօթ փորձառութեամբ եւ մասնագիտութեամբը
դեղարանիս մասնաւոր դարմանադհոր:

Ահա մասամբ մը պարզելով Դեղարանիս ներկայ վիճակը, կը յուսանք թէ արդոյ յա-
ճախողները ինչպէս ցարդ, յետ այսու եւս միշտ պիտի շարունակեն իրենց վստահութիւնը
Դեղարանիս նկատմամբ, եւ փախանակ հեռուոր տեղեր դիմելու՝ ազդուի պիտի այցելեն
Դեղարանս, ուր ամէն տեսակ դիւրութիւններ պիտի ընծայուին իրենց կատարելապէս գոհ
թողելու համար, քանի որ Դեղարանիս սկզբունքը եղած է ՈՒՂՂՈՒԹԻՒՆ:

ԴԵՂԱՐԱՆՍ ՈՒՆԻ ՆԱԵՒ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ

4—10